ՔԱՂՎԱԾՔ

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 25.06.2018թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Ք. Վանաձոր Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արտյոմ Գրիգորյանը, Արմեն Մատինյանը, Մարինե Հովհաննիսյանը, Հայկազ Մովսիսյանը, Դավիթ Սիմոնյանը, Սոխակ Մելքոնյանը, Գայանե Քալանթարյանը, Վահագն Ավագյանը, Խորեն Վարդանյանը, Վահե Դոխոյանը,Սեյրան Ղամբարյանը և Արման Ափինյանը:

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝

Սեյրան Աղաբեկյանը, Արևիկ Լոքյանը :

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արկադի Փելեշյանը, Կարեն Դավթյանը, Էրիկ Մովսիսյանը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ *Քրիստ Մարուքյանը, Կարինե Ղուկասյանը, Հրանտ Այվազյանը, Հայկազ Սիմիկյանը, Վահե Կոռյանը, Անահիտ Կարապետյանը, Ռոմիկ Մարգարյանը, Կարեն Բեկչյանը:*

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու անդամներ՝ *Հրաչիկ Ղամբարյանը, Մարիամ Ապերյանը, Դավիթ Հակոբյանը:*

Նիստից բացակայում էին՝

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու անդամներ՝

Հասմիկ Խլուպուզյանը, Տիգրան Նազարյանը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Սուրեն Կարապետյանը, Արմեն Եղիազարյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար *Արթուր Օհանյանը*, համայնքապետարանի ստորաբաժանումների ղեկավարներ, հասարակական կազմակերպությունների և ՀԼՄ-ների ներկայացուցիչներ:

Նիստը վարող *Մամիկոն Ասլանյանը* ժամը 11.10-ին նիստը հայտարարեց բացված:

(Վանաձորի ավագանու 2018 թվականի 4-րդ նստաշրջանի ավագանու 25.06.2018թ. հերթական նիստի տեսաձայնագրությունն ամբողջովին առկա է (https://www.youtube.com/watch?v=ktnX_4ZdFWY հղումով):

Մինչ օրակարգի հարցերին անցնելը Մամիկոն Ասլանյանը ներկայացրեց նաև «Ինտերկապ» ՀԿ-ի կողմից նախաձեռնության վերաբերյալ հարցը ավագանուն: Կազմակերպության ջանքերով կերտվում է

Զորավար Անդրանիկի արձանը, որը հետագայում, սահմանված կարգով, կարող է տեղակայվի ավագանու որոշմամբ հատկացված տարածքում՝ նախապես հաստատված ճարտարապետական միջավայրի էսքիզի հիման վրա: Ավագանու անդամները և համայնքի ղեկավարը տվեցին իրենց սկզբունքային համաձայնությունն ավագանու կանոնակարգին և քաղաքաշինական նորմերին համապատասխան հետագայում քննարկել այդ հարցը և տալ լուծում:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ հաստատել օրակարգն ամբողջությամբ:

Կողմ՝ 29, քվեարկությամբ հաստատվեց օրակարգը, ինչը նաև օրակարգի առաջին հարցի սպառումն էր :

Հաստատվեց օրակարգը՝

1.Վանաձոր համայնքի ավագանու 2018թ. հունիսի 25-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Մ.Ասլանյան

2.Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 109-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ.՝ Վ.Գրիգորյան

3.Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 30-ի թիվ 67 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ.՝ Վ.Գրիգորյան

4.Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 29-ի թիվ 28-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ.՝Ա.Հովհաննիսյան

5.ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2018թ. հողային հաշվեկշիռը հաստատելու մասին

զեկ.՝Ս.Աբովյան

6.Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին

զեկ.՝Ս.Աբովյան

7.Վանաձոր համայնքի Մ.Մատինյանի անվան թիվ 19 մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը շինություն և հողամաս անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին

զեկ.՝Ս.Աբովյան

8.Վանաձոր համայնքի վարչական սահմաններում՝ Նարեկացի փողոցի հարակից տարածքում գտնվող 0.000075 հա մակերեսով 06-001-2741-0001 ծածկագրով և 0.001279 հա մակերեսով 06-001-0315-0009 ծածկագրով հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին

զեկ.՝Ս.Աբովյան

9.Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու և փոստային հասցե տրամադրելու մասին

զեկ.՝Ս.Աբովյան

10.Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքի աճուրդային կարգով օտարելուն համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Վ.Դավիթավյան

11.Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

զեկ.՝ Մ.Ասլանյան

1. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 109-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 29, ընդունվեց որոշում:

2. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 30-ի թիվ 67 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 26, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 2, ընդունվեց որոշում:

3. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 29-ի թիվ 28-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Իրավաբանական բաժնի պետ Արևհատ Հովհաննիսյանը:
Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 29, ընդունվեց որոշում:

4. **ԼՍԵՑԻՆ** - ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2018թ. հողային հաշվեկշիռը հաստատելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 26, ձեռնպահ՝2, ընդունվեց որոշում:

5. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:
Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 24, դեմ՝ 4, ձեռնպահ՝ 1, ընդունվեց որոշում:

6. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի Մ.Մատինյանի անվան թիվ 19 մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը շինություն և հողամաս անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:
Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 25, ձեռնպահ՝ 1, ընդունվեց որոշում:

7. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի վարչական սահմաններում՝ Նարեկացի փողոցի հարակից տարածքում գտնվող 0.000075 հա մակերեսով 06-001-2741-0001 ծածկագրով և 0.001279 հա մակերեսով 06-001-0315-0009 ծածկագրով հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:
Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 25, ընդունվեց որոշում:

8. Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու և փոստային հասցե տրամադրելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 24, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 3, ընդունվեց որոշում:

9. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքի աճուրդային կարգով օտարելուն համաձայնություն տալու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի Եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնի պետ Վ.Դավիթավյանը:
Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 26, ձեռնպահ՝ 2, ընդունվեց որոշում:

10. Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2018 թվականի սեպտեմբերի 14-ը:
Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 28, ընդունվեց որոշում :

Վանաձորի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2018 թվականի սեպտեմբերի 14 -ը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Արձանագրությունը կազմեց Է. Հովսեփյանը